/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Շվեյցարիա /Ժնև / 10.10 - 17.10.2018թ.

- **Նպատակը**

Աշխատանքի միջազգային գրասենյակի (ԱՄԳ) կազմակերպած Աշխատանքի վիճակագիրների 20-րդ միջազգային համաժողով (ԱՎՄՀ):

- **Քննարկված թեմաները**

20-րդ ԱՎՄՀ ծրագրում ներառված էին ներքոթվարկյալ թեմաները.

1. ԱՄԳ վիճակագրական գործունեության 20-րդ ԱՎՄՀ Կոմիտեի հաշվետու ամփոփիչ զեկույցը (այսուհետ՝ Զեկույց I), որի շրջանակում ներկայացվեց հետևյալ ոլորտներին առնչվող ԱՄԳ գործունեությունը՝ աշխատանքի վիճակագրության համատեքստում.

ա. ԿԶՆ գլոբալ ցուցանիշների շրջանակ.

բ. Գյուղի վիճակագրություն.

գ. Սեռային (գենդերային) հիմնախնդիրների վիճակագրություն.

դ. Զբաղվածության որակի և արժանապատիվ աշխատանքի չափում:

2. 20-րդ ԱՎՄՀ Կոմիտեի Զեկույց II-ի ներկայացում՝ անցում ICSE-93-ից Աշխատանքային հարաբերությունների վիճակագրության.

3. 19-րդ ԱՎՄՀ «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» Առաջին բանաձևի հիմնադրույթները՝ կիրառության մեջ.

4. Աշխատանքային միգրացիայի չափումը.

5. Զեկույց I-ի շրջանակում կներկայացվեն աշխատանքի վիճակագրությանն առնչվող հետևյալ թեմաները.

ա. Կամավոր աշխատանք.

բ. Սպառողական գների ինդեքս.

գ. Կանաչ աշխատատեղեր.

դ. Հաշմանդամություն.

ե. Տնային տնտեսությունների հետազոտություններ.

զ. Երեխայի արգելված համարվող աշխատանքի չափում.

է. Հարկադիր աշխատանքի չափում.

ը. ILOSTAT և հարցաթերթեր, միկրոտվյալներ.

թ. Աշխատանքի վիճակագրության տեղեկատվական համակարգեր, վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակում.

ժ. Գնահատումներ և կանխատեսումներ.

ժա. Աշխատուժի որակավորումների և հմտությունների անհամապատասխանություն:

Համաժողովի ընթացքում քննարկվել են ԱՎՄՀ Կոմիտեի զեկույցները, ընդունվել են որոշումներ, ներկայացվել է 21-րդ ԱՎՄՀ օրակարգում ներառվելիք թեմաների շրջանակը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և քանակական գնահատման կարևորությունը:

- **Արդյունքները**

20-րդ ԱՎՄՀ ստանդարտների ներդրումն էապես կնպաստի կատարելագործելու աշխատանքի շուկայի վիճակագրության ոլորտը՝ ժամանակի պահանջներին համահունչ մոնիթորինգային ցուցանիշներ ապահովելու տեսանկյունից, ոչ միայն սոցիալ-տնտեսական ազգային քաղաքականության մշակման, վերանայման, այլ նաև տարածաշրջանային և գլոբալ աշխատաշուկաների զարգացման միտումների մշտադիտարկման առումով:

Համաժողովում առանձնակի ընդգծվեց միջհամաժողովյան ժամանակահատվածում աշխատանքային խմբերի աշխատանքների ինտենսիվացման անհրաժեշտությունը, անդամ-երկրներում վերանայված բանաձևերի կիրարկման նպատակով ուղեցույցների մշակումը, տեղայնացնելու նպատակով տեխնիկական աջակցությունը, դասընթացների կազմակերպումը, շահագրգիռ միջազգային կազմակերպությունների ներգրավումն այդ գործընթացներին:

Համաժողովի մասնակից երկրների փորձի, մարտահրավերների և քաղված դասերի ներկայացումները նպաստեցին գնահատելու Հայաստանում աշխատանքի վիճակագրության ոլորտի ձեռքբերումները և առկա բացերը՝ այլոց փորձով ուրվագծելու խնդիրների լուծման ուղիները:

- **Նշումներ**

Համաժողովին մասնակցում էին ավելի քան 185 անդամ-երկրներից աշխատանքի վիճակագիրներ՝ Գործատուների ներկայացուցիչ-անդամներ, Աշխատողների ներկայացուցիչ-անդամներ, շահառու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի մասնակիցներն էին կառավարությունների՝ հիմնականում աշխատանքի հարցերով ազգային նախարարությունների, վիճակագրական ազգային գրասենյակների, գործատուների, արհմիութենական կազմակերպությունների փորձագետ-ներկայացուցիչները, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների դիտորդ-ներկյացուցիչները:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել է ԱՄԳ-ի կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան